ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

1. Արդարադատության նախարարություն	19.12.2024թ. №/27.1/5209-2024 գրության
1.Նախագծի նախաբանում կիրառված օրենքի կրճատ անվանումն անհրաժեշտ է շտկել, նկատի ունենալով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, որի համաձայն՝ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը, ուստի անհրաժեշտ է հանել **«Հայաստանի Հանրապետության»** բառերը:	Ընդունվել է.
2.Նախագծի նախաբանում անհրաժեշտ է Նախագծի 3-րդ կետի համար որպես լիազորող նորմ լրացնել նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները: Միաժամանակ Նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի **«31-րդ»** հոդվածին կատարված հղումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հղումը Նախագծի ընդունման համար լիազորող նորմ չի պարունակում:	Ընդունվել է.
3. Նախագծի 1-ին կետում «20254» թիվը անհրաժեշտ է փոխարինել «2025» թվով:	Ընդունվել է.
4.Նախագծի 4-րդ կետով սահմանվում է, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով նախատեսվող որոշումը կարող է հրապարակվել 2025 թվականի հունվարի 1-ից հետո, ուստի առաջարկում ենք Նախագծի 4-րդ կետով սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:	Ընդունվել է.
5. Նախագծին կից ներկայացված 1-3-րդ Հավելվածների ողջ տեքստում անհրաժեշտ է ապահովել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, միաժամանակ անհրաժեշտ է շտկել 1-3-րդ Հավելվածների հերթական համարակալումը, նկատի ունենալով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:	Ընդունվել է. Կատարվել է հստակեցում
6.Հարկ ենք համարում նշել նաև, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից պարզ է դառնում, որ համայնքի բյուջեի նախագիծը բաղկացած է համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից և համայնքի ղեկավարի բյուջետային **ուղերձից**: Ուստի, տվյալ դեպքում Նախագծին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև բյուջետային ուղերձը	Ընդունվել է.